ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 947 432,3 հազար դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 5 050 981,4 հազար դրամ, կամ տարեկան մուտքերի առաջադրանքը կատարվել 102,1 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 803 087,7 հազար դրամի դիմաց կատարվել է 1 938 406,7 հազար դրամ կամ 107, 5 %-ով :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 296 874,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 264 178,3 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 97, 5 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 87,8 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 90,9 %-ով, տեղական տուրքերը՝ 189,0 %-ով, պետական տուրքերը՝ 143,2 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 90 846,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 171 736,3 հազար դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 20 000,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 28 634,8 հազար դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 3 108 576,7 հազար դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 540 758,5 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 678 226,5 հազար դրամ, կամ կատարվել է 125,4 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 125,0 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 265,2 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 3 998,0 հազ. դրամ:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 406 583,6 հազար դրամի դիմաց գանձումները կազմել է 388 002,8 հազար դրամ կամ կատարվել է 95, 4 %, որից աղբահանության վճարների մասով 168 050,0 հազար դրամի դիմաց գանձվել է 191 483,4 հազար դրամ կամ կատարվել է 113,9 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 77,3 %-ով:

Ծախսեր

2024 թ. համայնքի բյուջեի վարչական մասի տարեկան ծախսերը կատարվել է 76,3 %-ով՝ կամ 4 947 432,3 հազար դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 3 773 009,6 հազար դրամի, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 1 532 475,3 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 84, 6 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված 78 805,0 հազար դրամ ծախսերը կատարվել է 87,2 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար 500 359,8 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 97, 1 %-ով:

դ/ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ 216 500,0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 90, 5 %-ով:

ե/ Առողջապահության ոլորտում նախատեսված 800,0 հազար դրամի նախատեսված ծախսերը կատարվել է 91,2 %-ով:

զ/ Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով 184 794,0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 82, 8 %-ով:

է/ Կրթության ոլորտի համար բյուջեով 1 449 877,3 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 87, 9 %-ով:

ը/ Սոցիալական պաշտպանության համար 70 300,0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 66, 3 %-ով:

Մասիս համայնքի 2024թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3 808 753,2 հազար դրամի դիմաց կատարվել է 2 875 951,6 հազար դրամ, որից

տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 850 087,6 հազար դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 786 673,5 հազ. դրամ, բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային մաս՝ 250 000,0 հազար դրամ, համայնքի գույքին պատճառված վնասի փոխհատուցումից մուտք՝ 2 110,5 հազար դրամ, կապիտալ սուբվենցիա՝ 986 698,0 հազար դրամ և կապիտալ արտաքին դրամաշնորհ՝ 382, 0 հազար դրամ:

2024 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 2 644 584,3 հազար դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի, շինությունների կառուցման, հիմնանորոգման, համայնքային ճանապարհների հիմնանորոգման, բակերի և այգիների բարեկարգման, համայնքում առկա ոռոգման համակարգերի կառուցման և հիմնանորոգման, լուսավորության ցանցի կառուցման և արդիականացման, համայնքի բնակավայրերում գազաֆիկացման, բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման և մի շարք այլ աշխատանքների իրականացման համար՝ 2 494 890,6 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 92 488,2 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 57 205,5 հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1568-Լ որոշմամբ հաստատված ծրագրին համապատասխան 2024 թվականին Մասիս համայնքում իրականացվել է մասնակցային բյուջետավորման գործընթաց:

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ գործընթացը մեկնարկելու համար բյուջեում հատկացվել է 20 000,0 հազար դրամ:

Հաստատված պլան-ժամանակացույցին համապատասխան և օրենքով սահմանված կարգով մասնակցային բյուջետավորման գործընթացն անցել է բոլոր փուլերը:

Ներկայացվել է 9 առաջարկ, որից 2-ը չի համապատասխանել նախնական գնահատման չափանիշներին և մերժվել է:

Քվեարկության է դրվել ընդհանուր 7 առաջարկ, որից հաղթող է ճանաչվել «Բարենորոգում հանուն երեխաների» /Մասիս քաղաքի ՄՊՍԿ բակի բարեկարգում/ ծրագիրը:

Իրականացվել է գնումների գործընթաց, ձեռք է բերվել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ, և օրենքով սահմանված կարգով՝ մրցույթի արդյունքում կնքվել է կապալային աշխատանքների պայմանագիր: Ընդհանուր ծրագրի արժեքը կազմել է 14 003,0 հազար դրամ: Աշխատանքներն իրականացվել են 02.10.2024թ-25.11.2024թ: Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի կողմից ստորագրվել և ավարտական ակտով շահագործման է հանձնվել 2024թ. դեկտեմբերի 20-ին:

Ծրագրի բարեհաջող իրականացման արդյունքում Մասիս քաղաքի ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի բակը սալիկապատվել է բազալտե եզրաքարերով, տարածքը կանաչապատվել է, անցկացվել է ոռոգման և լուսավորման համակարգեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ